ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 սեպտեմբերի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

130
(3161)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒՇԱԳՐԱՎ ՔՈՒԳԱԴԻՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, Փարաքար խոշորացված համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանին սպանեցին սեպտեմբերի 23-ին՝ ժամը 23:50-ի սահմաններում:

Ի՞նչ էր անում Վալոդյա Գրիգորյանը նոր կառուցվող առանձնատանը կեսգիշերին՝ 23:50-ի սահմաններում:

Ընտանիքի անդամները «Ժողովուրդ» օրաթերթին դեպքի օրը պատմեցին, որ միայն օրվա վերջում էր նա հասցնում գնալ նոր տան վերանորոգման աշխատանքներին հետեւելու, եւ այդ օրը բացառություն չէր. հաճախ էր գնում, կամ ամեն օր: Սակայն համայնքում տարածված լուրերի համաձայն՝ Վալոդյա Գրիգորյանը սպասել է ժամը 12:00-ին, որպեսզի գնա եղբոր՝ Պայքար Գրիգորյանի ծնունդը շնորհավորելու: Բայց հնչել են դավադիր կրակոցները, ու նա չի հասցրել գնալ տնային կալանքի տակ գտնվող եղբոր մոտ:

Հիշեցնենք, որ այս տարվա փետրվարի 5-ին Մերձավանում հնչած կրակոցներից սպանված Գրիգոր Օհանյանը՝ ՔՊ-ական Միհեր Ախտոյանի հորաքրոջ որդին, սպանվել էր հենց իր ծննդյան օրը: Եվ հիմա համայնքում խոսում են, թե մարդասպանը Վալոդյա Գրիգորյանին սպանելու համար պատահական օր չի ընտրել:

Նշենք, որ Վալոդյա Գրիգորյանի եղբայրը սպանված Գրիգոր Օհանյանի սպանության գործով մեղադրյալներից մեկն է ու գտնվում է տնային կալանքի տակ:

«Ժողովուրդ» օրաթերթը Փարաքար խոշորացված համայնքում նկատեց եւ նկարահանեց, որ Մերձավանում 7 ամիս առաջ սպանված ՔՊ-ական Միհեր Ախտոյանի հորաքրոջ որդու՝ Գրիգոր Օհանյանի տունը իրավապահները վերահսկում են: Հատկապես նշանակետում պետք է լինի Գրիգորի եղբայրը՝ Նարեկ Օհանյանը:

Իսկ ինչ վերաբերում է Վալոդյա Գրիգորյանին ուղղված կրակոցներից վիրավորում ստացած Արծրուն Գալստյանին, ապա նրա եղբոր տղաները՝ Արթուր Գալստյանը, Մարզպետ Գալստյանն ու Սեւակ Գալստյանը եւս 7 ամիս առաջ Մերձավանում հնչած կրակոցների գործով մեղադրյալի աթոռին են:

Համայնքում լուրեր են պտտվում, որ Գրիգորյանի եւ ոստիկանի սպանության գործով արդեն իրավապահների տեսադաշտում կասկածյալ կա: Բայց փաստ է, որ իրավապահները մինչ օրս սպանություն կատարողին չեն հայտնաբերել. փնտրում են ու փնտրում:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթի տաղավարում հյուրընկալվել էր իրավապաշտպան Մարինա Պողոսյանը: Նա անդրադարձավ սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ողբերգական դեպքերին. Արմավիրի մարզի Մերձավան համայնքում տեղի ունեցան կրակոցներ, որի հետեւանքով զոհվեցին Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը եւ ոստիկան Կարեն Աբրահամյանը, իսկ մեկ անձ էլ վիրավորվեց, նույն օրը Սանկտ Պետերբուրգում՝ Հայաստանի հյուպատոսարանում, մահացած հայտնաբերվել էր Արցախի ՆԳՆ ԱԻՊԾ նախկին տեղակալ Բորիս Ավագյանը: Իրավապաշտպանի խոսքով՝ երկու դեպքն էլ խայտառակություն են Հայաստանի համար, եւ դրանց պատասխանատուները պետք է հրաժարական տան, այդ թվում՝ ներքին գործերի ու արտաքին գործերի նախարարները:

⇨ էջ 2



«Ժողովուրդ» օրաթերթի՝ առողջապահության նախարարությանը մոտ կանգնած աղբյուրները հայտնում են, որ սեպտեմբերի 18-ին՝ ժամը 17:30-ին, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը նախարարություն է հրավիրել Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի մի խումբ աշխատակիցների: Նույն աղբյուրների փոխանցմամբ, նախարարություն հրավիրված աշխատակիցները նախապես տեղեկացված չեն եղել հանդիպման նպատակից: Այնտեղ նրանցից պահանջվել է հանձնել բջջային հեռախոսները, ժամացույցներն ու պայուսակները՝ անկախ սեռից: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս հանգամանքը աշխատակիցների շրջանում տարակուսանք է առաջացրել, քանի որ անվտանգության նման պահանջներ կարծես թե կիրառվում են միայն բարձրագույն մակարդակի հանդիպումներում, օրինակ՝ վարչապետի մոտ ընդունելությունների ժամանակ: Ըստ ամենայնի, նման քայլը պայմանավորված է նախարարի այն մտահոգությամբ, որ հանդիպումների ընթացքում որեւէ մեկը կարող է ձայնագրել ներքին քննարկումները կամ արտահոսք ապահովել: Հատկանշական է, որ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնը երկար ժամանակ շարունակել է գործել առանց ղեկավարի: Մրցույթում նախարարի համար ընդունելի թեկնածուի բացակայության պատճառով հաստատությունը մինչ օրս մնում է առանց կառավարչի, ինչի պատասխանատուն առողջապահության նախարարն է:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանական շրջանակում կայացվել է քաղաքական ընդդիմախոսների դեմ կոշտ պայքարի որոշում: Օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ «Քաղաքացիական պայմանագրի» ներսում արդեն ձեւավորվել է հատուկ PR-խումբ, որի հիմնական առաքելությունը լինելու է լրատվամիջոցների հետ համակարգված աշխատանքը՝ նպատակ ունենալով վարկաբեկել բոլոր ընդդիմախոսներին: Ըստ աղբյուրների՝ ռազմավարությունը կառուցված է ընդդիմադիրներին «բնում ոչնչացնելու» գաղափարի շուրջ: Հատկապես նշվում է, որ բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք առաջիկայում կհայտարարեն իրենց մասնակցության մասին 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին, անմիջապես կդառնան ՔՊ-ի թիրախը: Տարբեր տվյալներով՝ իշխանական թիմը պատրաստվում է ներխուժել ընդդիմախոսների անձնական եւ մասնագիտական դաշտ՝ փորձելով վնասել նրանց հեղինակությունը եւ կանխել քաղաքական պայքարի ակտիվացումը: «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՔՊ-ին մոտ կանգնած աղբյուրները նաեւ պնդում են, որ ընդդիմադիր դաշտում արդեն իսկ ձեւավորվել են մի քանի թիմեր, որոնք առաջիկա ամիսներին մտադիր են հրապարակային հայտարարություններով գալ ընտրական դաշտ: Իշխանական ռազմավարության շրջանակում հենց այդ թիմերն են համարվում գլխավոր վտանգ, եւ իշխանությունը պատրաստ է ցանկացած քայլի գնալ՝ նրանց քաղաքականապես չեզոքացնելու համար: Միեւնույն ժամանակ, հակաիշխանական ճակատում գործող քաղաքական ուժերի զգալի մասը գիտակցում է սպասվող զարգացումները եւ պատրաստվում է հնարավոր ճնշումների, այդ թվում՝ քաղաքական ռեպրեսիաների, իրավական հալածանքների եւ նույնիսկ ազատազրկումների: Չի բացառվում, որ առաջիկայում քաղաքական շրջանակներում սրացումները կթեւակոխեն առավել թեժ փուլ՝ զուգահեռաբար ընթացող գործընթացների, այդ թվում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին գահընկեց անելու նախաձեռնության հետ մեկտեղ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԻՐԱՎԱՊԱՀՏՊԱՆԸ՝ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԴԵՊՔԻ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ողբերգական դեպքի՝ Վալոդյա Գրիգորյանի դաժան սպանության վերաբերյալ իրավական հարցազրույց է ունեցել իրավապահտպան Մարինա Պողոսյանի հետ:

-Տիկին Պողոսյան, սեպտեմբերի 23-ին Արմավիրի մարզի Մերձավան գյուղում տեղի ունեցած կրակոցների հետեւանքով սպանվեցին Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը եւ ոստիկան Կարեն Աբրահամյանը, կա նաեւ մեկ վիրավոր: Սակայն այս պահի դրությամբ դեռեւս չկան կասկածյալներ կամ ձերբակալվածներ: Շատերը կարծում են, որ սա քաղաքական հետապնդում էր, մյուսները համարում են վենդետա: Ի՞նչ եք կարծում դուք:

-Նախ ցանկանում եմ ցավակցություն հայտնել Վալոդյա Գրիգորյանի եւ Կարեն Աբրահամյանի ընտանիքներին: Ուրախացրեց այն հանգամանքը, որ երրորդ տուժածը՝ Արծրուն Գալստյանը, կոմայից դուրս եկավ: Ես կփորձեմ զերծ մնալ տարբեր վարկածներ առաջադրելուց. դա իրավապահ համակարգի գործն է: Բայց պետք է նշեմ, որ իրավապահները թերացել են: Եթե դիտարկենք վենդետայի տարբերակը, պետք է ասեմ, որ նման դեպքեր Հայաստանում, ցավոք, հաճախ են լինում՝ Արագածոտնում, Աշտարակում եւ այլ մարզերում: Իսկ եթե պարզվի, որ քաղաքական հետապնդում է, ապա դա արդեն մեծ սրիկայություն կլինի: Շատ կուզենայի սխալվել, սակայն եթե դա իսկապես քաղաքական հետապնդում է, համոզված եմ, որ մեղավորները չեն հայտնաբերվելու:

-Ինչո՞ւ:

-Նման հանցագործությունները հազվադեպ են բացահայտվում: Ցանկանում եմ սխալվել, բայց հնարավոր է, որ իրական հանցագործը չհայտնաբերվի, եւ մեղքը վերցնի ուրիշ մեկը: Ամեն դեպքում այսօր մեր երկրում ապրելը վտանգավոր է դարձել:

Վալոդյա Գրիգորյանին անձամբ չեմ ճանաչել, միայն գիտեմ, որ նա ընտրություններում հաղթեց, եւ հաղթեց մեծ դժվարությամբ: Եթե այս ամենի հիմքում քաղաքական հաշվեհարդար է, ապա դա խայտառակություն է. նշանակում է, որ քաղաքական պայքարը չսկսված արդեն ավարտվել է:

Իրավապահների գործունեությունն ինձ համար անհասկանալի է: Փոքր հանցագործության դեպքում կարող են տասնյակ տեսախցիկներ ուսումնասիրել, իսկ այս դեպքո՞վ...

Հանցագործությունը տեղի է ունեցել կեսգիշերին մոտ, ոչ թե խոր գիշերով: Ինձ համար անհասկանալի է, թե ինչպես է հնարավոր երեք մարդու վրա նման դաժանությամբ հարձակվել: Վարձու մարդասպանը սովորաբար գործում է սառնասրտորեն, առանց ավելորդության, իսկ այստեղ մարդասպանը առնանձնակի հաշվենկատ է եղել, լրատվամիջոցները նշում էին, որ վերադարձել ու սպանվածին հարվածներ է հասցրել զենքով:

Այսօր մենք սկսում ենք մահը ընկալել որպես սովորական բան: Պատերազմից հետո կարծես սովորել ենք, որ մարդիկ կարող են այսպես սպանվել, եւ հանցագործը մնա անպատիժ: Բայց դա չի կարելի նորմալացնել:

Բոլորին հայտնի էր, որ Փարաքարում լարվածություն կար: Պարտված ուժերը չէին համակերպվում Գրիգորյանի հաղթանակի հետ: Ավելին՝ կար վենդետայի վտանգ. ամիսներ առաջ կրակոցների դեպք էր եղել, որի կապակցությամբ Գրիգորյանի մտերիմներից որոշ մարդիկ ձերբակալվել էին: Այս ամենը պետք է հիմք դառնար համայնքում ուժեղացված ծառայություն կազմակերպելու համար, ինչը, սակայն, չի արվել:

Ի՞նչ է կատարվում մեր երկրում: Թշնամին դրսից սպասում է հարվածելու իր հնարավորությանը, իսկ մենք ներսից այսպես ենք միմյանց ոչնչացնում:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԹՐԱՄՓԻՆ

«Ռուսաստանը երբեք վագր չէ: Ռուսաստանը ավանդաբար կապված է արջի հետ: «Թղթե արջեր» գոյություն չունեն, եւ Ռուսաստանը իրական արջ է», - հայտարարել է Կրեմլի խոսնակը՝ պատասխանելով Դոնալդ Թրամփի այն հայտարարությանը, թե Ռուսաստանը «թղթե վագր» է:

Պեսկովը ասել է, որ Պուտինը բազմիցս է նշել, որ երկրին կարելի է պատկերացնել որպես արջ, եւ որ այս երկրում ոչինչ թղթե չէ: Նա հավելել է, որ Ռուսաստանի դիմադրողականությունը պահպանվում է, մակրոարդյունաբերական կայունությունը՝ նույնպես:

Թրամփը գրել է Truth Social-ում. «Ռուսաստանը երեք տարի մի քանի ամիս անզոր կերպով պատերազմում է, պատերազմ, որը պետք է իրական ռազմական ուժին վերցներ մի քանի շաբաթում: Սա դարձնում է Ռուսաստանին «թղթե վագր»»:

Թրամփը նաեւ գրեց, որ Ուկրաինան, Եվրոպայի եւ ՆԱՏՕ-ի աջակցությամբ, կարող է վերադարձնել իր ամբողջ տարածքները:

Պեսկովը նաեւ նշել է, որ Թրամփը «բիզնեսմեն» է, եւ ենթադրվում է, թե նրա հայտարարություններն ուղղված են աշխարհին ավելի թանկ ամերիկյան նավթ շահարկելուն:

ՎԼԱԴԻՄԻՐ ՋԵԼԵՆՍԿՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել է, որ պատերազմի ավարտից հետո «պատրաստ է» հեռանալ պաշտոնից: «Իմ նպատակը պատերազմն ավարտելն է, ոչ թե պաշտոնում մնալը», - ասել է նա:

Զելենսկին նշել է, որ հրադադարի դեպքում կդիմի խորհրդարանին՝ ընտրություններ կազմակերպելու համար, թեեւ Սահմանադրությունը այն արգելում է ռազմական դրության պայմաններում: Նրա խոսքով՝ ուկրաինացիները գուցե ցանկանան նոր մանդատ ունեցող առաջնորդի:

Նա նաեւ ասել է, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին հայտնել է՝ հրադադարը կարող է ճանապարհ բացել ընտրությունների համար:

Զելենսկին ընտրվել է 2019-ին: Իր պաշտոնավարման ժամկետը պետք է ավարտվեր 2024-ի մայիսին, սակայն պատերազմը հետաձգել է ընտրությունները: Նրա վարկանիշը շարունակում է մնալ բարձր՝ չնայած ներքին քննադատություններին:

ԿԸՀ-ն եւ քաղաքական ուժերը համաձայն են, որ ընտրությունները լինեն միայն ռազմական դրության ավարտից հետո:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ ՆՈՐ ՊԱՇՏՈՆ ԿՏԱՆ

Դեռեւս 2020 թվականի հունիսի 2-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ էր նշանակվել Ռուբեն Սարգսյանը: Նախօրեին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Սարգսյանն ազատվել է աշխատանքից: ArmLur.am-ի տեղեկություններով՝ Փաշինյանը նպատակ ունի Սարգսյանին նոր պաշտոնի նշանակել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ռուբեն Սարգսյանին կնշանակեն աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգերի հետ: Հանդիպումը կայացել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 80-րդ նստաշրջանի շրջանակներում: Այս մասին հայտնում են ԱԳՆ-ից:

Նախարարության մամուլի ծառայությունից հայտնում են, որ Արարատ Միրզոյանը եւ Միրյանա Սպոլյարիչ Էգերը քննարկել են հումանիտար բնույթի հարցեր, մասնավորապես Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների եւ պատանդառված քաղաքացիների ազատ արձակման, ինչպես նաեւ Ադրբեջանում ԿԽՄԿ գրասենյակի փակման պայմաններում նրանց այցելությունների կազմակերպման խնդիրները:

Զրուցակիցները հույս են հայտնել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ օգոստոսի 8-ի Վաշինգտոնյան գագաթնաժողովի համաձայնություններով հաստատված խաղաղությունը կնպաստի նաեւ հումանիտար հարցերի կարգավորմանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

Նյու Յորք աշխատանքային այցի շրջանակում նախարար Համբարձում Մաթեւոսյանը հանդիպել է Միացյալ Թագավորության Խորհրդարանական փոխպետքարտուղար, Բնության նախարար Մերի Գրեգի հետ: Այս մասին հայտնել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են բնապահպանական օրակարգի մի շարք կարեւոր հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ Կողմերի համաժողովի (COP17) կազմակերպչական եւ նախապատրաստական գործընթացներին:

Քննարկել են Միացյալ Թագավորության մասնակցության հնարավոր ձեւաչափերը, ինչպես նաեւ համաժողովի արդյունավետ կազմակերպման եւ միջազգային համագործակցության խորացման ուղիները: Անդրադարձ են կատարել նաեւ Գլազգոյում կայացած Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կողմերի 26-րդ համաժողովի (COP26) փորձին եւ դասերին, որոնք կարող են օգտակար լինել COP17-ի նախապատրաստական աշխատանքներում:

Վերահաստատել են բնապահպանական հարցերում փոխգործակցության եւ գործընկերային հարաբերությունների շարունակականության ապահովման երկուստեք պատրաստակամությունը: Համատեղ ջանքերի եւ փորձի փոխանակման միջոցով հնարավոր է բարձրացնել համաժողովի արդյունավետությունն ու ազդեցությունը՝ այն դարձնելով տարածաշրջանային եւ միջազգային համագործակցության կարեւոր հարթակ:

COP17-ը ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ տարածաշրջանի համար կարող է դառնալ բնապահպանական օրակարգի առաջմղման բացառիկ հնարավորություն:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Սիրիան եւ Ուկրաինան վերականգնել են դիվանագիտական հարաբերությունները, որոնք նախկինում խզվել էին Կիեւի նախաձեռնությամբ:

Հրապարակված տեղեկատվության համաձայն՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին կոմյունիկեն Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի շրջանակներում ստորագրել են երկու երկրների արտգործնախարարները՝ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու եւ Արաբական Հանրապետության անցումային շրջանի նախագահ Ահմեդ ալ Շարաայի ներկայությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԵՆ ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղրղզստանի խորհրդարանի անդամները քննարկել եւ ընդունել են վաղաժամկետ ինքնալուծարման մասին օրինագիծը, հաղորդում է օրենսդիր մարմնի մամուլի ծառայությունը: Նախաձեռնող խմբի առաջարկը աջակցել է նիստին ներկա 89 անդամներից 84-ը:

Ղրղզստանի խորհրդարանի մի խումբ պատգամավորներ սեպտեմբերի սկզբին առաջարկել են վաղաժամկետ հրաժարականի նախաձեռնությունը: Նրանք ինքնալուծարման անհրաժեշտությունը բացատրել են որպես քաղաքական անկայունությունից խուսափելու միջոց: Նախաձեռնության հեղինակները նշել են, որ Սահմանադրության համաձայն՝ խորհրդարանական ընտրությունները նախատեսված են 2026 թվականի նոյեմբերին, իսկ նախագահական ընտրությունները՝ 2027 թվականի հունվարին: Նրանք կարծում են, որ նման կարճ ժամկետները կհանգեցնեն ավելորդ ծախսերի եւ դժվարություններ կստեղծեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար:

«Երկու կարեւոր քաղաքական իրադարձությունների՝ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների միջեւ տարբերությունը կարճ է, ուստի երկրում քաղաքական համակարգը եւ կայունությունը ամրապնդելու համար նախաձեռնող խումբն առաջարկել է, որ խորհրդարանը կամավոր հրաժարական տա», - հայտարարել է նախաձեռնության հեղինակներից մեկը՝ պատգամավոր Ուլան Պրիմովը:

Ղրղզստանի խորհրդարանի ներկայիս 7-րդ գումարման խորհրդարանը կշարունակի գործել մինչեւ նոր ընտրությունների ամսաթվի պաշտոնական հրապարակումը: AKIPress-ի փոխանցմամբ, արտահերթ ընտրություններ նշանակելու մասին հրամանագիրը պետք է ստորագրի Ղրղզստանի նախագահը: Ընտրությունները կանցկացվեն նոր համակարգով. նախատեսված է 30 ընտրատարածք, որոնցից յուրաքանչյուրում կընտրվեն երեք պատգամավոր (երկու տղամարդ եւ մեկ կին):

Ղրղզստանի միապալատ խորհրդարանը (Ժոգորկու Կենեշ) բաղկացած է խառը համակարգով ընտրված 90 պատգամավորից: Վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2021 թվականի նոյեմբերին: Ըստ կարգի՝ Ղրղզստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունները նախատեսված են նոյեմբերի 30-ին:

ՈՐՈՇՈՒՄ

ՖԻՆՆԱԽԻՆ ՆՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏՐՎԻ

Ֆինանսների նախարարին լիազորություն կտրվի՝ ստորագրելու համաձայնագիր, որն ուղղված է Հայաստանում հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությանն ու կայունությանը, ինչպես նաեւ ֆինանսական հատվածի զարգացման բարելավմանը: Այդ մասին Կառավարության՝ սեպտեմբերի 25-ի նիստին հայտնեց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին որոշման նախագիծը:

Առաջին եւ երկրորդ փուլերն իրականացվել են, համապատասխանաբար, 2022 եւ 2024 թվականների սեպտեմբերին, իսկ երրորդ փուլը նախատեսվում է իրականացնել այս տարի:

Նախարարը ներկայացրեց նաեւ բարեփոխումների բնույթը: Ըստ այդմ՝ ֆինանսների նախարարությունում գանձապետարանի գործառույթի մասով իրականացվող բարեփոխումների համատեքստում կմշակվի եւ կներդրվի ընթացիկ կապիտալ ծախսերի տվյալների բազա, հետներդրումային շրջանի մշտադիտարկման համակարգ եւ ինստիտուցիոնալ գործառույթ՝ գերածախսերի դեպքերը, դրանց պատճառները եւ ծախսերի չկատարման կամ անարդյունավետ կատարման դեպքերը լավագույնս հայտնաբերելու համար:

«Կառավարությունը կհաստատի կանաչ եւ կայուն տնտեսական զարգացման մասին ազգային ռազմավարությունը, իսկ էկոնոմիկայի նախարարությունը կսահմանի շրջանաձեւ տնտեսության ներդրման նախադրյալների սահմանման հայեցակարգը եւ դրա իրականացման գործողությունների ծրագիրը:

Օրենսդրական փոփոխությունների շարք կիրականացվի, որոնք ՀՀ ԿԲ-ին կտան լիազորություններ ենթաօրենսդրական ակտերի միջոցով սահմանելու ոչ հանրային ֆոնդերի համար նոր կանոններ՝ այդպիսով հնարավորություն տալով հայկական ֆոնդերին, այդ թվում՝ վենչուրային եւ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերին, ոչ հանրայինից անցնելու հանրայինին՝ շուկան զարգացնելու համար:

Կարգավորման ազդեցության գնահատումն ավարտելուց հետո Կառավարությունն ԱԺ հաստատմանը կներկայացնի անվճարունակության մասին նոր օրենքի նախագիծը: Մի շարք փոփոխություններով կբարելավվի պետական ձեռնարկությունների կորպորատիվ կառավարումը»,- ասաց նա:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ ծրագիրն իրականացվում է ԱԶԲ-ի հետ համատեղ, հետեւաբար, բարեփոխումների շրջանակը եւս նույնական է ԱԶԲ-ի հետ, առաջիկայում ստորագրվելիք վարկային համաձայնագրի քաղաքականության աղյուսակի հետ:

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը նկատեց՝ այս համագործակցությունը վկայությունն է այն բանի, որ այն, ինչ նախատեսվում է պետական բյուջեի մասին օրենքով եւ դրա շրջանակում, ֆինանսական կայունության եւ կանխատեսելիության շրջանակում է:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ավստրիայի եվրոպական եւ միջազգային հարցերի դաշնային նախարար Բեատե Մայնլ-Ռայզինգերի հետ, հայտնում են ԱԳՆ-ից:

«Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Ավստրիայի միջեւ երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացմանն ուղղված նախաձեռնությունները:

Արարատ Միրզոյանը եւ Բեատե Մայնլ-Ռայզինգերը մտքեր են փոխանակել ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման գործընթացի հեռանկարների շուրջ: Նախարար Միրզոյանը բարձր է գնահատել տարբեր նախաձեռնություններին Ավստրիայի կողմից ցուցաբերվող աջակցությունը՝ ի թիվս այլնի կարեւորելով մարդկանց միջեւ շփումների, շուկայի հասանելիության ընդլայնման ուղղությամբ շարունակական աշխատանքները:

Անդրադարձ է կատարվել նաեւ ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհին հանդիպող մարտահրավերներին արդյունավետ հակազդման ուղղությամբ փոխգործակցության մեխանիզմներին: Արարատ Միրզոյանը եւ Բեատե Մայնլ-Ռայզինգերը անդրադարձել են նաեւ տարածաշրջանային զարգացումներին, ինչպես նաեւ բազմակողմ հարթակներում փոխգործակցության հարցերի», - ասված է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՆԸ ՉԻ ՁԳՏՈՒՄ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ ՍՏԱՆԱԼ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանն ընդգծել է, որ Իսլամական Հանրապետությունը երբեք չի ձգտել եւ երբեք չի ձգտի միջուկային զենք ստանալ:

«Ես այս ամբիոնից կրկնում եմ. Իրանը չի ձգտել եւ չի ձգտի ստեղծել միջուկային ռումբ», - ասել է նա՝ ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 80-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկման ժամանակ, հաղորդում է ՏԱՍՍ-ը:

Փեզեշքիանը նաեւ ընդգծել է, որ այսպես կոչված «ԵՄ3»-ը, ԱՄՆ աջակցությամբ, փորձել է ճնշում գործադրել Իրանի վրա եւ վերականգնել Իրանի դեմ պատժամիջոցները, որոնք վերացվել էին 2015 թվականի միջուկային համաձայնագրի շրջանակներում:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեին ծննդյան օրվա առթիվ: Ուղերձում ասված է.

«Ձերմորեն շնորհավորում եւ լավագույն մաղթանքներ եմ հղում Ձեր ծննդյան օրվա առթիվ:

Վստահ եմ, որ Ձեր փորձառու առաջնորդությամբ Վրաստանը շարունակելու է հաստատուն քայլերով առաջ ընթանալ՝ արձանագրելով կայուն զարգացում բոլոր ոլորտներում:

Մեծապես գնահատելի է Ձեր կարեւոր ներդրումը Հայաստան-Վրաստան ռազմավարական գործընկերային հարաբերությունների առավել խորացման եւ առկա ներուժի շարունակական իրացման հարցում:

Կրկին շնորհավորում եմ Ձեր ծննդյան օրվա առթիվ՝ մաղթելով առողջություն եւ ամենայն բարիք»:

ԲԱԽՎԵԼ ԵՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐ

Մոսկվայի «Շերեմետեւո» օդանավակայանից Սանկտ Պետերբուրգ մեկնող FV 6097 չվերթի ուղեւորները տարհանվել են Sukhoi Superjet օդանավից՝ թռիչքուղում մեկ այլ ուղեւորատար ինքնաթիռի հետ բախման պատճառով: Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները՝ հղում անելով օդանավակայանին:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ «Շերեմետեւո»-ում թռիչքից առաջ ուղեւորներով օդանավի պոչը վնասվել է: Այդ պահին օդանավում գտնվում էր շուրջ 100 մարդ:

ՀԱՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ

ՔՆՆՎՈՒՄ Է ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Փարաքար խոշորացված համայնքի ղեկավարի սպանությունից անցել է 2 օր, բայց մարդասպանը չի հայտնաբերվել՝ չնայած իրավապահ համակարգում որոշակի հեռֆի վրա են: Հայտնի չէ նաեւ, թե ով է ենթադրյալ պատվիրատուն:

Սեպտեմբերի 23-ի ուշ երեկոյան իր տան բակի տարածքում սպանվեց Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանը, կրակոցներից սպանվել էր նաեւ քրեական ոստիկանության աշխատակից Կարեն Աբրահամյանը, իսկ Վալոդյա Գրիգորյանի ընկեր Արծրուն Գալստյանի վիճակը, որը դեպքից հետո գնահատվում էր ծայրահեղ ծանր, այժմ բավարար է, նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Ինչպե՞ս էր գործել վարձու մարդասպանը

Իրավապահ համակարգում, ուսումնասիրելով մարդասպանի գործողությունները, որոշակի հանգամանքներ են առաջ քաշվել: Մասնավորապես, մարդասպանը պրոֆեսիոնալ է գործել եւ բավականին թիրախային կրակոցներ է արձակել: Մտածում են՝ նա կամ որսորդ է, կամ ուժային կառույցի նախկին աշխատակից: Բայց ուշագրավն այն է, որ կրակելուց հետո նա կրկին ստուգողական գործողություն է արել՝ եւս մի քանի կրակոց արձակելով արդեն հատակին ընկած Վալոդյա Գրիգորյանի վրա, ու, չբավարարվելով դրանով, զենքի խզակոթով հարվածել է Գրիգորյանին:

Իրավապահ համակարգում վարկած կա, որ ենթադրյալ պատվիրատուն է վարձու մարդասպանին հանձնարարել, որ նա ստուգողական կրակոցներով սպանի, ու հետո էլ վրեժխնդրության տեսարան սարքի՝ զենքով հարվածելով:

Վարկածներ. ո՞վ կամ ինչո՞ւ սպանեց Վալոդյա Գրիգորյանին

Այս հարցի պատասխանը մինչ օրս մնում է անհայտ: Իրավապահ մարմինները՝ ներքին գործերի նախարարությունը ու ԱԱԾ-ն, արդեն երկու գիշեր է լուսացնում են Փարաքարի փողոցներում ու փորձում բացահայտել դեպքը, հաստատել վարկածներ:

Իսկ ի՞նչ վարկածներ են շրջանառվում՝ որպես սպանության հավանական պատճառ:

Վարկած 1

Դեռեւս այս տարվա փետրվարի 5-ին կրակոցներ հնչեցին Մերձավանում, ինչի հետեւանքով սպանվեց ՔՊ-ական համայնքի ղեկավար Մհեր Ախտոյանի հորաքրոջ որդին, որի ընթացքը Ախտոյանն անձամբ նկարել էր լուսամուտից: Քրեական գործով այսօր կա 14 մեղադրյալ ու բոլորը Վալոդյա Գրիգորյանի մտերիմներն են: Իսկ փոխհրաձգությանը մասնակցած մյուս անձինք, որոնք եւս զինված կռիվ էին տվել նշված օրը, կապ ունեն «Քաղաքացիական պայմանագիր» իշխող կուսակցության քաղաքական թիմի հետ, համարվեցին տուժող:

Բայց դրանից քննությունը իրավիճակ չէր փոխել համայնքում: Մերձավանում լարված մթնոլորտը շարունակվում էր, համայնքի բնակիչները ArmLur.am-ի հետ տարբեր զրույցներում բազմիցս պնդել են՝ ինչո՞ւ արդար քննություն չի ընթանում, ինչո՞ւ չեն փորձում գտնել իրական մարդասպանին, այլ միայն քաղաքական հակառակորդների են մեկուսացնում ընտրական գործընթացներից առաջ:

Այս պատմությունն աչքի առաջ ունենալով՝ իրավապահ մարմինները քննում են նաեւ վարկածը, թե նախկին կրակոցը ինչքանով կարող էր կապ ունենալ Գրիգորյանի սպանության հետ:

Վարկած 2

Օգոստոսի 4-ին պարեկները ձերբակալել էին ԱՄՆ-ում ՀՀ նորանշանակ դեսպան ՔՊ-ական Նարեկ Մկրտչյանի եղբորը՝ Մկրտիչ Մկրտչյանին: Տեղեկություն տարածվեց, որ նրա մեքենայի միջից հայտնաբերվել է թմրանյութ եւ ապօրինի զենք: Ավելի ուշ Քննչական կոմիտեն հայտնեց, որ նախաձեռնվել է վարույթ՝ հրազենի ապօրինի շրջանառության, թմրամիջոցների ապօրինի իրացնելու հատկանիշներով: Սակայն ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի եղբորը մեղադրանք առաջադրեցին միայն ապօրինի զենք պահելու համար, եւ հիմա նա տնային կալանքի տակ է: Ինչ եղավ թմրամիջոցների իրացման մասով վարույթը՝ չպարզվեց: Ավելին՝ մինչ քննչական կոմիտեն քննում էր դեսպանի եղբոր հարցը, ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը շտապեց արդարացնել Նարեկ Մկրտչյանի եղբորը՝ հրապարակավ հայտարարելով, թե մեքենայում հայտնաբերվածը չի պատկանել Նարեկ Մկրտչյանի եղբորը:

Սխալ էին զեկուցել Արփինե Սարգսյանին, թե նա փորձում էր փրկել իր նախկին կոլեգայի եղբորը՝ հարցական է դեռ:

Այս դեպքի հաջորդ օրը՝ սեպտեմբերի 5-ին, ՀՀ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը կադրային ջարդ սկսեց մի շարք համայնքներում եւ նրա հրամաններով ոստիկանության գնդապետ Ասքանազ Դավթյանն ազատվեց Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի պաշտոնից, ոստիկանության փոխգնդապետ Ղարիբ Գրիգորյանն ազատվեց Պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի հրամանատարի պաշտոնից: Այս աղմկահարույց դեպքից հետո 2 շաբաթ անց իր տան բակում դաժանաբար սպանվեց Վալոդյա Գրիգորյանը:

Քանի որ համայնքում երկու օր է հիշում են, որ ՔՊ-ական Մկրտիչ Մկրտչյանը եւ սպանված Վալոդյա Գրիգորյանը ոխերիմ թշնամիներ էին, իրավապահները, որպես վարկած, սպանության դեպքը դիտարկում են նաեւ ՔՊ-ական Նարեկ Մկրտչյանի եղբոր հետ կատարվածի համատեքստում:

Վարկած 3

Իրավապահները այլ, այդ թվում եւ կենցաղային վարկածներ էլ են քննում, ստուգելով, թե ընտրված համայնքապետը ում հետ է վերջին շրջանում շփվել, ինչ է կատարվել, ինչ կոֆլիկտ է ունեցել որեւէ մեկի հետ, սակայն, բացի ՔՊ-ի շրջապատից, Գրիգորյանի մասին այլ բացասական տեսակետ արտահայտողներ չկան: Ուստի իրավիճակն ավելի է բարդանում, եւ փաստ է մեկ բան. վարկածները ավելանում են, սակայն մարդասպանը չկա ու չկա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

1 ՄԼՆ ԴՐԱՄ ՏՈՒԳԱՆՔ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքի վարձակալված հատվածում գործող ավտոլվացման կետում արձանագրել են ապօրինի ջրօգտագործման դեպք:

Վարձակալ Ա.Մ.-ն խախտելով բնապահպանական օրենսդրության պահանջները՝ իրեն պատկանող ավտոլվացման կետում առանց համապատասխան թույլտվության ապօրինի խորքային հորից կատարել է ապօրինի ջրառ:

Տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի որոշմամբ ապօրինի խորքային հորի շահագործումը կասեցվել է:

Իրավախախտի նկատմամբ նշանակվել է վարչական տուգանք՝ 1.000.000դր. չափով:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացվել է տեղեկություն, որ Արարատի մարզի Նորաշեն գյուղի բնակիչ 28-ամյա երիտասարդն ապօրինի ձեռք է բերում թմրամիջոց եւ իր կողմից շահագործվող «Օպել» մակնիշի ավտոմեքենայով դրանք տեղադրելով՝ իրացնում Հրազդան եւ Չարենցավան քաղաքների տարբեր վայրերում, մասնավորապես՝ Չարենցավանի «Գանգրահեր տղան» արձանի մոտակայքում:

Հուլիսի 31-ին՝ ժամը 20:15-ին, Կոտայքի մարզի Ֆանտան գյուղում երիտասարդը ձերբակալվեց եւ մեքենայով հանդերձ տեղափոխվեց վարչություն: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց մոխրացված հետքերով երկու կաթուցիչ եւ մարիխուանայի նմանվող զանգված:

Պարզվել է, որ նույն օրը տելեգրամյան մի օգտատիրոջ հետ պայմանավորվել եւ իրացնելու նպատակով Ձորաղբյուր գյուղի տարածքից վերցրել է մեկ գրամանոց 40 փաթեթ, որոնք տեղադրել է Չարենցավանի եւ Հրազդանի տարբեր վայրերում, ինչի համար օգտատերն իրեն պետք է յուրաքանչյուրի համար վճարեր 9 դոլար:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում Հրազդանում եւ Չարենցավանում հայտնաբերվել է մարիխուանայով լցված եւ արդեն տեղադրված 18 փաթեթ:

Երիտասարդի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի ծառայողները սեպտեմբերի 21-ին՝ ժամը 21:15-ին, Խաղաղ Դոնի փողոցում ձերբակալել եւ, իր վարած «Շեւրոլետ» մակնիշի մեքենայով հանդերձ, Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժին են տեղափոխել Արարատի մարզի Արարատ գյուղի բնակիչ 43-ամյա մի տղամարդու: Նրան խուզարկելիս հայտնաբերվել են 7 գրամից ավելի քաշով դեղնականաչավուն զանգվածով պոլիէթիլենային տոպրակ եւ փայլաթիթեղյա երեք փաթեթ՝ ընդհանուր 40 գրամից ավելի մարիխուանայի զանգվածով:

ԳՈՐԾԸՆԹԱՑ Է ՍԿՍՎԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎԱՍԱՐԴ ԿՃՈՅԱՆԻ ԴԵՄ

Գլխավոր դատախազությունը Հակառուցիոն դատարան է դիմել ընդդեմ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի (Սամվել Կճոյանի) մասով:

Մեզ հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը Հակակոռուպցիոն դատարանից պահանջում է հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանից հողամասի կառուցապատման իրավունքը հարկադիր դադարեցնել: Հակակոռուպցիոն դատարանում գործը մակագրվել է դատավոր Կարապետ Բաղալյանին:

Հիշեցնենք, որ դեռեւս 2023 թվականին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը հրավիրվել էր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Կճոյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Թե Կճոյանին պատկանող որ գույքի օրինականության առնչությամբ է դատախազությունում կասկած առաջացել, հայտնի չէ: Այս փուլում դատախազությունը չի հրապարակում գույքի ցանկը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացատրությունների կամ ապացույցների արդյունքում այն կարող է փոխվել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 24-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 111 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՂԲԸ ԹԱՓՈՒՄ ԵՆ ԱՂՍՏԵՎ ԳԵՏ

Տուրիստական Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցում շինարարական աղբը լցնում են Աղստեւ գետը, որ վարարման ժամանակ գետը այն քշի-տանի: Բնակիչների կողմից մեծ քանակությամբ շինարարական աղբ Դիլիջանի Գետափնյա փողոցից Աղստեւ գետ թափելու վերաբերյալ տեսանյութ է տեղադրված «Քո Դիլիջանը» ֆեյսբուքյան խմբում: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը, համայնքապետարանի պաշտոնյաները չեն տեսնում այս ապօրինությունը:

ՀՈՂԱՄԱՍԵՐ Է ՕՏԱՐԵԼ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում զետեղված են համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի բազմաթիվ որոշումները, որոնցով նա Դիլիջանի հողերը ընդլայնման կարգով, շուկայականից էժան գներով օտարել է: Ահավասիկ այդ որոշումներից մեկը: Դիլիջան քաղաքի Հակոբջանյան փողոցի, թիվ 99 հասցեի 15518.2 քմ հասարակական կառուցապատման հողամասը պատկանում է քաղաքացի Սաթիկ Հմայակի Աղաջանյանին: Վերջինս դիմել է Դիլիջան համայնքի ղեկավարին՝նշված հողամասին կից, Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց, թիվ 104/7 հասցեի 615.9 քմ մակերեսով, Օրջոնիկիձեի փողոցի, թիվ 106/3 հասցեի 1089.5քմ մակերեսով եւ Օրջոնիկիձեի փողոցի, թիվ 108/2 հասցեի 429.1քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Հուլիսի 8-ին համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է Դիլիջան քաղաքի Հակոբջանյան փողոցի, թիվ 99 հասցեի 15518.2 քմ հասարակական կառուցապատման հողամասին կից գտնվող, Օրջոնիկիձեի փողոցի, թիվ 104/7 հասցեի 615.9 քմ մակերեսով, Օրջոնիկիձեի փողոցի, թիվ 106/3 հասցեի 1089.5 քմ մակերեսով եւ Օրջոնիկիձեի փողոցի, թիվ 108/2 հասցեի 429.1 քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձեւով (ընդլայնման կարգով) օտարել Սաթիկ Հմայակի Աղաջանյանին: Հողամասերի արժեքը կազմել են համապատասխանաբար 4 209 246 դրամ, 7 445 970 դրամ եւ 2 932 599 դրամ:

ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ԿԱՐԻՔ ԿԱ

Տավուշի մարզպետարանը կառավարության 2024 թ. թիվ 1394-L որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի համաձայն՝ հրապարակել է Տավուշի մարզի այն բնակավայրերի ցանկը, որտեղ անհրաժեշտություն կա սպանդանոցային ծառայության, որոնք գտնվում են գործող սպանդանոցներից առնվազն 15 կմ հեռավորության վրա: Տավուշի 62 բնակավայրերից 41-ը կարիք ունի շարժական սպանդանոցի: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ ինչ է արվել Տավուշի մարզում շարժական սպանդանոցներ գործարկելու համար: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1394-L որոշման շրջանակներում Տավուշի մարզում տնտեսվարողների կողմից շարժական սպանդանոցներ գործարկելու համար հայտ չի ներկայացվել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌԴ ՊՆ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿՐԵԼ Է ՇԱՆՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, որ Ուկրաինայի զինված ուժերը վերջին 24 ժամվա ընթացքում (25.09 տվյալներով) մարտական կորուստներ են կրել բոլոր առաջնագծերում՝ ընդհանուր մոտ 1,490 զինծառայող: Այս տվյալները ներկայացվել են Ուկրաինայում իրականացվող «հատուկ ռազմական գործողության» վերաբերյալ վերջին հաշվետվությունում: Ըստ ՊՆ-ի՝ կորուստները բաշխվել են հետեւյալ կերպով.

Հյուսիսային մարտախմբի պատասխանատվության գոտում՝ մոտ 170 զինծառայող, Արեւմտյան մարտախմբում՝ շուրջ 220 զինծառայող, Հարավային մարտախմբում՝ մինչեւ 225 զինծառայող, Կենտրոնական մարտախմբում՝ ավելի քան 530 զինծառայող, Արեւելյան մարտախմբում՝ մոտ 280 զինծառայող, Դնեպր մարտախմբում՝ մինչեւ 65 զինծառայող:

Հարվածներ են հասցվել Ուկրաինայի 3 մեխանիզացված բրիգադների եւ 2 գրոհային գնդերի ուժերին Սումիի մարզի Ալեքսեեւկա, Անդրեեւկա, Խրապովշչինա եւ Յունակովկա գյուղերի մոտակայքում:

Խարկովի շրջանում հարվածներ են հասցվել Ուկրաինայի մեխանիզացված հետեւակային եւ տարածքային պաշտպանության բրիգադներին՝ Բոչկովո եւ Վոլչանսկ բնակավայրերի մերձակայքում:

Ուկրաինան կորցրել է 1 զրահամեքենա, 8 ավտոմեքենա, 2 հրետանային հրացան, 1 ռադիոէլեկտրոնային պայքարի կայան, 2 զինամթերքի պահեստ:

Հարվածներ են հասցվել Ուկրաինայի 3 մեխանիզացված բրիգադների, գրոհային, տարածքային պաշտպանության եւ Ազգային գվարդիայի բրիգադներին՝ Խարկովի մարզի Բոլդիրեւո, Կոլոդեզնոյե, Պետրովկա, Սմորոդկովկա, Ստարովերովկա եւ Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության Յամպոլ բնակավայրերի մոտ:

Ուկրաինան կորցրել է 13 ավտոմեքենա, 5 դաշտային հրետանային հրացան, 8 ռադիոէլեկտրոնային պայքարի կայան, 7 զինամթերքի պահեստ:

Հարավային մարտախումբ հարվածներ է հասցրել Ուկրաինայի 3 մեխանիզացված բրիգադներին, գրոհային եւ տարածքային պաշտպանության բրիգադներին՝ ԴԺՀ-ի Բերեստով, Իլինովկա, Կոնստանտինովկա, Սեւերսկ բնակավայրերի մոտակայքում:

Ուկրաինան կորցրել է 1 տանկ, 7 զրահամեքենա, 13 ավտոմեքենա, 4 հրետանային հրացան, 1 ռադիոէլեկտրոնային պայքարի կայան, 11 զինամթերքի պահեստ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ ԼՈՒՐԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ Google–ՈՒՄ

Android-ի Google Photos օգտատերերն այժմ հնարավորություն ունեն խմբագրել լուսանկարները՝ օգտագործելով բնական լեզվով ձայնային կամ տեքստային հրամաններ:

Արհեստական բանականությամբ աշխատող այս գործառույթը թույլ է տալիս օգտատերերին կատարել խմբագրումներ՝ առանց հասկանալու բոլոր գործիքները եւ դրանց գտնվելու վայրերը հավելվածում:

Սկզբում այն հասանելի էր ԱՄՆ-ում օգոստոսին թողարկված Pixel 10 նոր սարքերի սեփականատերերին: Արհեստական բանականությամբ խմբագրումն այժմ ընդլայնվել է ԱՄՆ-ում գտնվող բոլոր չափահաս Android օգտատերերի համար:

Գործառույթն օգտագործելու համար խմբագրիչում անհրաժեշտ է սեղմել «Օգնիր ինձ խմբագրել» կոճակը եւ նկարագրել, թե ինչպես եք ուզում փոխել լուսանկարը: Եթե գաղափարներ չունեք, կարող եք օգտագործել Gemini-ի պատրաստի առաջարկները կամ պարզապես ասել՝ «Դարձրու այն ավելի լավը»:

Գործառույթն աջակցում է ստանդարտ խմբագրումներին, ինչպիսիք են լուսավորության կարգավորումը: Հասանելի են նաեւ ավելի բարդ խմբագրումներ, ինչպիսիք են ֆոնային առարկաների հեռացումը եւ հին լուսանկարների վերականգնումը: Կարող եք ավելացնել արհեստական բանականությամբ աշխատող տարրեր՝ ձեր պատկերն ավելի արտահայտիչ եւ ստեղծագործական դարձնելու համար:

Խմբագրման գործընթացի ընթացքում Gemini-ն հասկանում է ձեր պարզաբանումների հարցումները եւ օգնում է ձեզ կատարելագործել վերջնական արդյունքը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերին Google-ը հայտարարեց Chrome-ի համար արհեստական բանականության խոշոր թարմացման մասին:

ՈՒԻԹՔՈՖԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Ուիթքոֆը հայտնել է, որ Հայաստանին եւ Ադրբեջանին վերաբերող հարցերի շուրջ խորհրդակցում է Թուրքիայի արտգործնախարարի եւ հետախուզության ղեկավարի հետ:

Նա նշել է, որ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմ Բարաքի միջոցով իմանում է Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի եւ Ազգային հետախուզական կազմակերպության ղեկավար Իբրահիմ Քալընի կարծիքը Ադրբեջանի, Հայաստանի եւ Ուկրաինայի հետ կապված թեմաների վերաբերյալ:

«Օրինակ՝ ես զանգահարում եմ Թոմին եւ հարցնում՝ ինչ կարծիք ունի Իբրահիմ Քալընն այս հարցի վերաբերյալ: Հենց այդպես էլ աշխատում ենք միասին: Հաջողության անհամար օրինակներ կան»,- հայտարարել է Ուիթքոֆը:

ՆԻԿՈԼԱ ՍԱՐԿՈԶԻՆ ՄԵՂԱՎՈՐ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Փարիզի քրեական դատարանը Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիին մեղավոր է ճանաչել 2007 թվականի այսպես կոչված «լիբիական գործով»: Դա կապված է Լիբիայի այն ժամանակվա առաջնորդ Մուամար Քադաֆիի կողմից իր նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման հետ:

Միեւնույն ժամանակ, Սարկոզիին արդարացրել են կոռուպցիայի մեղադրանքով: Դատարանը նաեւ որոշել է, որ նախկին նախագահի 2007 թվականի ընտրարշավի անօրինական ֆինանսավորում չի եղել:

Դատավորը նշել է, որ Սարկոզին մեղավոր է ճանաչվել, մասնավորապես, նրա համար, որ թույլ է տվել, որ իր մերձավոր աշխատակիցները գործեն իր անունից՝ Լիբիայից ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով եւ քննարկել է դիվանագիտական պատասխան միջոցների հարցը: Հետաքննությունը տեւել է ավելի քան 10 տարի:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար, 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

«Ֆասթ» բանկը, ի դեմս բանկի խորհրդի նախագահ, բարերար Վահե Բաղալյանի, 50 մլն դրամի աջակցություն է ցուցաբերել Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին՝ Մատենադարանին, լայնածավալ բարեգործական ծրագրի իրագործման համար:

«Ֆասթ» բանկի խորհրդի նախագահ Վահե Բաղալյանն ասել է. «Մատենադարանը մեզ համար պարզապես շենք չէ, այն մեր ազգային հիշողության տաճարն է: Այստեղ պահվում են ձեռագրեր, բայց նրանց էջերին պահված է ավելին՝ մեր ժողովրդի ճակատագիրը, մեր գիտական, գրական մտածողության զարգացումները, մեր հավատի լույսն ու մեր իղձերի շարունակությունը: Մատենադարանը մեր գենետիկ կոդն է»:

Բաղալյան ընտանիքի աջակցությամբ Մատենադարանի նկուղային հարկում կառուցվում է սրճարանային տարածք եւ հուշանվերների խանութ: Նախաձեռնությունն ուղղված է ինչպես այցելուների հարմարավետության ապահովմանը, այնպես էլ Մատենադարանի թանգարանային փորձառության արդիականացմանը: Մատենադարանի մուտքն ամբողջությամբ կվերանորոգվի՝ պահպանելով պատմամշակութային արժեքները: Նոր տարածքը կունենա առանձին ելք, կվերանորոգվեն դարպասներն ու մուտքի դռները: Աշակերտական խմբերի համար կստեղծվի ժամանակակից պայմաններին համապատասխան առանձին մուտք:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Արա Խզմալյանն իր խոսքում նշել է. «Մատենադարանը բարեգործության խորհրդանիշ է: Մատենադարանի հավաքածուները բարեգործության, մեծանուն նվիրատուների արդյունք են: Մեր համագործակցությունը մասնավորաբար պարոն Բաղալյանի հետ, Բաղալյան ընտանիքի հետ, «Ֆասթ» բանկի հետ մի նոր մշակույթ է, համագործակցության հաստատում, մեկենասության մի նոր որակ, որը ոչ միայն վերաբերում է Մատենադարանին, ոչ միայն վերաբերում է Բաղալյան ընտանիքին, այլ վերաբերում է լայն իմաստով մեր ազգային եւ հանրային կյանքին»:

Հավելենք նաեւ, որ որպես երախտագիտության նշան՝ Մատենադարանում բացվել է պատվո կամար, որի վրա ոսկե տառերով գրված են բարերարներ Վահե եւ Վիգեն Բաղալյանների անունները: Այս խորհրդանշական քայլը եւս մեկ անգամ ընդգծում է Բաղալյան ընտանիքի նշանակալի ներդրումը՝ Մատենադարանի եւ հայկական մշակույթի պահպանման ու զարգացման գործում:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի հանդիսությունների դահլիճում տեղի կունենա «ՍԷԼՍՈՒ» ՍՊԸ-ի կողմից Հորթաջուր գետակի վրա կառուցվող ՓՀԷԿ-ի վերաբերյալ հանրային լսում, որը տեղի կունենա 2025 թվականի հոկտեմբերի 9-ին՝ ժամը 11:00-ին:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ԱՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Սեպտեմբերի 24-ին Երեւանի Ավան վարչական շրջանում բացվեց Արդշինբանկի «Ավան» մասնաճյուղը: Սա բանկի 29-րդ մասնաճյուղն է Երեւանում եւ 72-րդը՝ հանրապետությունում:

Ինչպես հայտնեցին բանկից, մասնաճյուղի բացման անհրաժեշտությունը պայմանավորված է բանկի հաճախորդների թվի շարունակական աճով, եւ բանկը ձգտում է իր ծառայություններն ավելի հասանելի դարձնել Երեւան քաղաքի բոլոր շրջանների բնակիչների համար:

«Մենք ձգտում ենք մեր հաճախորդների համար ստեղծել առավել հարմարավետ պայմաններ, որպեսզի նրանք կարողանան օգտվել բանկի ծառայություններից իրենց ավելի հարմար վայրում: Չնայած բանկի մասնաճյուղային ցանցը երկրում ամենամեծն է, Ավանում մենք ներկայացված չէինք եւ այժմ այդ բացը լրացված է: Ավան վարչական շրջանում ապրում է մոտ 54,000 բնակիչ, ինչը կազմում է մայրաքաղաքի բնակչության 5%-ը: Ավանն ակտիվորեն զարգանում է? կառուցվում են նոր բազմաբնակարան շենքեր, բիզնեսներն ընդլայնվում են, ուստի տրամաբանական է, որ բանկը որոշել է այստեղ մասնաճյուղ բացել», - մեկնաբանեց Մանրածախ բիզնեսի տնօրենի տեղակալ, Ցանցային վաճառքների վարչություն պետ Արսեն Թամազյանը:

Մասնաճյուղը նախագծվել է՝ հատուկ ուշադրություն դարձնելով հաճախորդների հարմարավետությանը, բարձրորակ սպասարկմանը եւ անվտանգությանը: Այն առանձնանում է համապարփակ տեխնիկական հնարավորություններով, ժամանակակից լուծումներով եւ նորարարական ինտերիերով: Մասնաճյուղը սպասարկում է ինչպես մանրածախ, այնպես էլ փոքր եւ միջին բիզնեսի հաճախորդներին: Այն հագեցած է բազմաֆունկցիոնալ տերմինալներով, որոնք թույլ են տալիս հաճախորդներին ֆինանսական գործարքներ կատարել 24/7 ռեժիմով: Բացի այդ, հաճախորդները կարող են ֆինանսական ծառայություններից օգտվել առցանց՝ առանց բանկ այցելելու:

Մասնաճյուղի հաճախորդներից մեկի՝ Ավան վարչական շրջանի բնակչի խոսքով՝ Հայաստանի ամենամեծ բանկի մասնաճյուղի բացումը զգալիորեն կհեշտացնի բանկային ծառայություններից օգտվելը եւ հնարավորություն կտա ստանալ արագ, ժամանակակից եւ բարձրորակ սպասարկում. «Ուրախ եմ, որ մեր թաղամասում եւս բացվել է Արդշինբանկի մասնաճյուղ, ավելի հեշտ կլինի օգտվել բանկի ծառայություններից»:

«Ավան» մասնաճյուղը գտնվում է Ավան վարչական շրջանում՝ Իսահակյան թաղամաս 25/3 հասցեում: Աշխատանքային օրերը՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:15-ից մինչեւ 16:45, շաբաթ օրերին՝ 10:15-ից մինչեւ 13:45: Հեռ. +374 12 22 22 22:

***

2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ Արդշինբանկի հաճախորդների թիվը կազմում է մոտ 570,000, որոնց սպասարկում են ավելի քան 2300 աշխատակիցներ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում գործող 72 մասնաճյուղերում: Բացի մասնաճյուղերում սպասարկումից, բանկն առաջարկում է հաճախորդների բոլոր կատեգորիաներին ճկուն եւ հուսալի հեռավար ծառայությունների ամբողջական փաթեթ՝ հարմարեցված նրանց կարիքներին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ Armenian Auto Show–ՈՒՄ. ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Սեպտեմբերի 26-ից 28-ն «Ամերիաբանկը» մասնակցելու է Armenian Auto Show-ին՝ ներկայացնելով իր MyCar.am հարթակը եւ գործընկեր դիլերների հետ մշակված հատուկ առաջարկները բացառապես էքսպոյի այցելուների համար: Մասնավորապես, երեք օր շարունակ էքսպոյի այցելուները կկարողանան տեղում գտնել իրենց մեքենան եւ գնել այն՝ առանց կանխավճարի եւ ավտովարկավորման հատուկ տոկոսադրույքով:

Նշենք, որ «Ամերիաբանկն» ավտովարկերի պորտֆելով շարունակում է պահպանել ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարի դիրքը շուկայի շուրջ 50% մասնաբաժնով (30.06.2025թ. դրությամբ):

2025թ.-ի առաջին 8 ամսում տարեվերջի համեմատ «Ամերիաբանկի» ավտովարկերի պորտֆելն աճել է ավելի քան 40%-ով: Նույն ժամանակահատվածում «Ամերիաբանկի» ավտովարկերի ավելի քան 30%-ը տրամադրվել է առցանց՝ MyCar.am հարթակի միջոցով: MyCar.am հարթակն այցելուներին հնարավորություն է տալիս գտնել ցանկացած կարիքի եւ հնարավորության համապատասխան մեքենա՝ ընտրություն կատարելով առաջնային եւ երկրորդային շուկայի առաջատար դիլերների առաջարկներից: Հարթակում ներկայացված են առաջարկներ ավելի քան 60 ավտոդիլերի կողմից, որոնցից շուրջ 30-ը՝ պաշտոնական ներկայացուցիչ: MyCar.am-ն արդեն հնարավորություն է տալիս նաեւ անհատներին վաճառել իրենց սեփական մեքենան, ինչի համար անհրաժեշտ է գրանցվել հարթակում:

Հավելենք, որ հաշվիչների, զտիչների եւ մեքենաների համեմատման գործիքների շնորհիվ հարթակում հնարավորինս պարզեցված է մեքենա փնտրելու եւ գտնելու գործընթացը, ինչը նպաստում է հաճախորդների ժամանակի խնայողությանը, օգնում գին-որակ հարաբերակցության մեջ արագ կողմնորոշվելու եւ լավագույն ընտրություն կատարելու հարցում:

«Ամերիաբանկի» մասին

«Ամերիաբանկը» ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: «Ամերիաբանկը», որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

ՆԱՎԹԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԿԲՃԱՏՎԵԼ ԵՆ

ԱՄՆ-ում կոմերցիոն նավթի պաշարները նախորդ շաբաթ նվազել են 607 հազար բարելով՝ հասնելով 414.8 մլն-ի: Այս մասին ասվում է երկրի էներգետիկայի նախարարության շաբաթական զեկույցում:

Մասնագետները միջինում կանխատեսում էին դրանց աճը մոտ 800 հազար բարելով: Այս մասին հայտնում է Trading Economics-ը:

Բենզինի առեւտրային պաշարները սեպտեմբերի 19-ին ավարտված շաբաթվա ընթացքում նվազել են 1.08 մլն բարելով, դիզվառելիքի պաշարները՝ 1.685 մլն բարելով:

Կուշինգի տերմինալում, որտեղ պահվում է Նյու Յորքի ապրանքային բորսայում վաճառվող նավթը, պաշարներն աճել են 177 հազար բարելով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՎԵՍՏ

ԶԱՐԴԵՐՆ ՈՒ ԻՐԵՆՑ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Զարդերը մշտապես ունեցել են բացառիկ նշանակություն մշակույթի ուսումնասիրության մեջ, հատկապես դեկորատիվ արվեստի եւ ազգային գեղագիտական ընկալումների համատեքստում: Դրանք արտահայտում են զգացողություններ, ճաշակ, ոճի նախապատվություններ եւ, ընդհանրապես, այն, ինչ կարելի է համարել գեղեցկության չափանիշ: Զարդերի նախշերի կառուցվածքը, ձեւի եւ մասերի հարաբերությունները հաճախ համեմատելի են ճարտարապետական շինությունների համամասնությունների հետ, եւ ցանկացած խախտում ակնառու ու անցանկալի է, քանի որ գեղեցկության սկզբունքը հիմնված է հենց չափերի ներդաշնակության վրա:

Գրավոր աղբյուրներն ու հնագիտական վկայությունները միասին ստեղծում են զարդերի կարեւորության ամբողջական պատկերը՝ սկսած քարե կուռքերի եւ XIX-XX դդ. կավե աղամանների վրա պատկերված գլխի ու կրծքի զարդերից, մինչեւ ոսկերչական գործիքների ու արտադրանքի պահպանված օրինակները: Հնագիտական պեղումները փաստում են, որ Հայաստանի տարածքում բրոնզի դարաշրջանում ոսկերչությունն արդեն զարգացած էր, օգտագործվում էին գրեթե բոլոր հայտնի պատրաստման եղանակները:

Հին ժամանակներից ի վեր կանայք եւ տղամարդիկ կրել են վարսակալներ, հերազարդեր, ականջօղեր, մանյակներ, մատանիներ, ճարմանդներ, զարդասեղներ, կախիկներ, կոճակներ, շղթաներ եւ այլ զարդեր: Բացի գործնական ու գեղագիտական արժեքից, այս զարդերը ուսումնասիրության առարկա են նաեւ իրենց խորհրդանշական իմաստների շնորհիվ:

Դարերի ընթացքում զարդերն ընդգրկել են բոլոր խավերի ներկայացուցիչներին՝ քրմերից, ցեղապետներից, թագավորներից ու թագուհիներից, պալատականներից, ազնվականներից, զինվորականներից մինչեւ եկեղեցականներ, մեծահասակներ, երեխաներ, չամուսնացածներ ու ամուսնացածներ: Սակայն յուրաքանչյուր խումբ ունեցել է որոշակի տեսակի զարդեր կրելու իրավունք, որը հաճախ ժառանգաբար փոխանցվել է հորից որդի: Զարդերը տարբերվում էին նաեւ կրողների սեռով եւ տարիքի պատկանելությամբ:

Որոշ միջնադարյան կրոնական գործիչներ, օրինակ՝ Հովհան Մանդակունի կաթողիկոսը (478-490), իրենց ձեռնարկած գրություններում սաղմոս էին երգում զարդերի նկատմամբ՝ նկատի ունենալով չափազանցումը. «Եթե գովելի չէ տան մեջ զարդարվելը, ապա որքան առավել՝ի տես բոլորի պճնվելը»: Թեեւ որոշ քննադատություններ եղել են, զարդերի կրելու սովորույթը երբեք չի ընդհատվել: V դարի պատմիչ Ղազար Փարպեցին գրեթե պոետիկ կերպով նկարագրում է արժեքավոր մետաղների ու քարերի մշակման արվեստը՝նշելով, որ ոսկին, պղինձը, երկաթն ու պատվական քարերը, ընկնելով արհեստավորների ձեռքը, վերածվում էին թագավորների եւ ազնվականների շքեղ զարդերի, խույրերի, թագերի ու հանդերձների՝ ստեղծելով գեղեցկության բարձր չափանիշներ:

XIII դարի հեթում թագավորը խոսում է Կիլիկյան Հայաստանի եւ Հնդկաստանի առեւտրական կապերի մասին՝ նշելով Ցեյլոնից բերված թանկարժեք քարերը: Չինաստանից նույնպես քարեր էին բերվում, իսկ Կիլիկիայի արհեստավորների պատրաստած ոսկյա ու արծաթյա առարկաները լայնորեն արտահանվում էին Ղրիմ, Հարավային Ռուսաստան ու Արեւմտյան Եվրոպա:

XVIII-XX դդ. հայկական ազգային հագուստը նույնպես անբաժանելիորեն կապված էր զարդերի հետ: Զարդերը օգտագործվել են որպես վզնոց, կրծքազարդ, մատանի, ապարանջան, քթի օղ, ականջի օղ եւ ամրացվել են գլխի հարդարանքին, թեւքերին, զգեստի քղանցքների ճեղքերին: Հագուստի նման զարդերն էլ տարբերվել են տարածաշրջանների միջեւ: Կանայք կրել են զարդեր ինչպես առօրյայում, այնպես էլ հատուկ առիթներին, օրինակ՝ տոների կամ հարսանիքների ժամանակ, երբ վզից լանջի վրա կախվել են մարգարիտների, ոսկու եւ արծաթի շարքեր, ականջօղեր, ապարանջաններ եւ այլ զարդեր: XIX դարում Կիլիկիայում աղջիկների ֆեսին ամրացվել է արծաթե թաս, մազերի ծայրերին ուլունքներ, թեւերին՝ ապարանջաններ, գլխազարդերից ծնոտի տակով անցնող շղթաներ եւ «մաշալլահ» կոչվող եռանկյուններ՝ ոսկեդրամերով:

Ազգային զարդերը ոչ միայն գեղեցկություն էին ստեղծում, այլեւ պաշտպանում էին չար աչքից, հիվանդություններից ու այլ բացասական երեւույթներից, համարվում էին բարեբերության, առատության, հարստության եւ երջանկության խորհրդանիշ: Այսպիսով՝ զարդերը մարդկանց հոգեբանորեն ապահովություն եւ ինքնավստահություն են հաղորդել. այն զարդերը, որոնք կրել են կանայք եւ տղամարդիկ, դարձել են ազգային ինքնության, մշակութային հարստության եւ անձնական ներքին աշխարհի արտահայտություն: Զարդերն ու բարեբեր հմայակները հաճախ ընդհանուր ծագում են ունեցել, եւ սրա շնորհիվ է, որ զարդ կրելով՝ մարդ հոգեբանորեն ավելի պաշտպանված, ինքնավստահ, ապահով եւ հանգիստ է զգում, իսկ ամենօրյա զարդ կրելու սովորույթն ընդգծում է այս հանգամանքը:

Նյութի համար հիմք է ծառայել «Հայ կանանց զարդերի գործառույթները» վերնագրով հոդվածը՝ Աստղիկ Իսրայելյանի հեղինակությամբ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՎԵՍՏ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՍԿԵ ՄԵՏԱՂԱԴՐԱՄ» ՄՐՑԱՆԱԿ

Եվրոպական գիտական եւ մշակութային համայնքի խորհուրդը եւ Բուլղարական մշակութային եւ գիտական էլիտայի ակումբը, Բուլղարիայի արտաքին գործերի եւ մշակույթի նախարարությունների եւ Մեզդրա քաղաքի քաղաքապետարանի հետ համատեղ, «Միջազգային մշակութային համագործակցություն» նախաձեռնության եւ Մեզդրա քաղաքի 75-ամյակի կապակցությամբ ՀՀ դեսպանությանն արժանացրել է «Մշակութային ոսկե մետաղադրամ» մրցանակի:

Դեսպանության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ կապակցությամբ դեսպան Ծովինար Համբարձումյանը հրավիրվել է Մեզդրա քաղաք՝ որպես մրցանակի հանձնման պաշտոնական արարողության պատվավոր հյուր:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔԸ ՎՏԱՆԳՎԱԾ Է

Արեւմտյան Հայաստանի (այժմ Թուրքիայում) Վան քաղաքի Վերին Բաքրաչլը թաղամասի բնակիչները իշխանություններից պահանջում են գործնական քայլեր ձեռնարկել եւ վերջնական փլուզումից փրկելու տեղի հայկական Վարագավանքը: Այս մասին գրառում է հրապարակվել «Նոր Մարմարա» օրաթերթը «Ֆեյսբուք»-ի պաշտոնական էջում:

Գրառման մեջ ասվում է, որ Վան քաղաքի Վերին Բաքրաչլը թաղամասում գտնվող պատմական հայկական Վարագավանքը, որի մեծ մասն արդեն իսկ գոյություն չունի, կործանման եզրին է:

«Վանքի գմբեթները փլված են, որմնանկարներն ու արձանագրությունները՝ վնասված: Վանքը, որը հանրածանոթ է որպես «Յոթ եկեղեցիներ», կառուցվել է 8-րդ դարում՝ դառնալով հոգեւոր կարեւոր կենտրոններից մեկը: Այս կառույցը երկար տարիներ ի վեր չի նորոգվել եւ շարունակում է պահպանվել միայն տեղի բնակիչների ջանքերով: Ամեն տարի բազմաթիվ հայ զբոսաշրջիկներ են այցելում վանք եւ աղոթում են ավերակների մեջ», - ասվում է տեքստում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի աթլետիկայի հավաքականի անդամները մասնակցեցին 2025 թվականի աշխարհի առաջնությանը:

Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայացած աթլետիկայի աշխարհի առաջնությունում Հայաստանի աթլետիկայի հավաքականի անդամ, Փարիզի Օլիմպիական խաղերին մասնակցած վազորդ Երվանդ Մկրտչյանը որակավորման փուլի իր մրցահերթում զբաղեցրել է 13-րդ տեղը՝ 15000 մետր տարածությունը հաղթահարելով 3:48.21 արդյունքով:

38-ամյա Նինա Ուսուբյանը մարաթոնում զբաղեցրել է 44-րդ տեղը `2:42:37 արդյունքով: Նինա Ուսուբյանը սկսել է Հայաստանի դրոշի ներքո հանդես գալ 2025 թվականից, նախկինում նա ներկայացնում էր Ռուսաստանը:

«ԱԼԱՇԿԵՐՏ»–Ի ՀԱՐՁԱԿՎՈՂԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼ–Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի օգոստոս ամսվա լավագույն ֆուտբոլիստն «Ալաշկերտ»-ի հարձակվող Օլավալե Ֆարայոլան է:

«Ալաշկերտ»-ի նիգերիացի հարձակվող Օլավալե Ֆարայոլան ճանաչվել է Պրեմիեր լիգայի օգոստոսի լավագույն ֆուտբոլիստ՝ երկրպագուների, սպորտային լրագրողների եւ մեկնաբանների քվեարկության արդյունքում:

Ֆարայոլան առաջ է անցել բոլոր մրցակիցներից՝ հավաքելով ընդհանուր ձայների շուրջ 40%-ը:

Երկրորդ տեղում «Ուրարտու»-ից Նարեկ Աղասարյանն է, իսկ եռյակի վերջում՝ Էդգար Գրիգորյանը՝ «Արարատ-Արմենիա»-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱՆՈՒ ՊԱՇՏՊԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ

Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Ստյոպա Մկրտչյանը, ով օգոստոսին ստացած վնասվածքի պատճառով բաց էր թողել ընտրանու սեպտեմբերյան հավաքը, վերադարձել է խաղադաշտ:

22-ամյա ֆուտբոլիստը երեկ մասնակցել է Խորվաթիայի գավաթի 1/16 եզրափակչի «Ուլյանիկի» դեմ խաղին (4:0)՝փոխարինման դուրս գալով 86-րդ րոպեին:

Նախքան այդ հանդիպումը նա խաղաժամանակ էր ստացել Խորվաթիայի առաջնությունում՝ «Իստրա 1961»-ի հետ խաղի վերջին րոպեներին:

Ակնկալվում է, որ Մկրտչյանը լիովին պատրաստ կլինի ընտրանու հոկտեմբերյան հավաքին՝ մասնակցելու Հունգարիայի (հոկտեմբերի 11) եւ Իռլանդիայի (հոկտեմբերի 14) դեմ խաղերին:

● Հոկտեմբերի 3-ին՝19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Համլետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար:

Կարինե Ջիլավյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել՝

1) ամուսնալուծվողի (ամուսնալուծվողների) անձը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենը,

2) ամուսնության պետական գրանցման վկայականը՝ առկայության դեպքում, կամ ամուսնության պետական գրանցման մասին տվյալներ՝ գրանցող մարմինը, վայրը եւ ժամանակը,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասի,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անգործունակ ճանաչելու մասին,

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին ազատազրկման դատապարտելու վերաբերյալ,

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծությունը գրանցելու մասին,

7) անգործունակ անձի նկատմամբ օրինական ներկայացուցիչ նշանակվելու մասին իրավասու մարմնի որոշման պատճենը:

8. Ամուսնալուծության պետական գրանցման դիմումը լիազորված անձի միջոցով ներկայացվելու դեպքում նաեւ ներկայացվում է անձի լրացրած եւ սահմանված տեղեկությունները պարունակող դիմումը՝ հաստատված նոտարական կարգով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացված դիմումը ուժի մեջ է վեց ամսվա ընթացքում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Արման Միքայելյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



2025 թվականին լույս տեսած նոր այբբենարաններում բացակայում է հայոց գրերի ստեղծող Մսերոպ Մաշտոցի նկարը, ինչը մի շարք արդարացի քննադատությունների պատճառ դարձավ:

Ծնողները, սակայն, գտել են լուծումը: Նրանք ինքնուրույն փակցնում են Մաշտոցի նկարը դասագրքում՝ լրացնելով ԿԳՄՍՆ-ի «բացթողումը»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 7 +16 + 21
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +16 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 +21 + 24
Գեղարքունիք	+ 2 + 7 +13 + 17
Լոռի	+ 2 + 8 +16 + 21
Տավուշ	+10 + 14 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 2 + 6 +17 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 12 +21 + 24

Արարատ	+8 + 11 +22 + 25
Արմավիր	+ 8 + 12 +22 + 26
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 12 +22 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 10 +13 + 17
Սյունիքի հովիտներ	+11 + 14 +21 + 25
ԼՂՀ	+ 9 + 12 +21 + 24
Երեւան	+13 + 16 +21 + 24

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*